Արմավիի մարզի Գետաշեն համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1. Արմավիրի մարզի Գետաշենի գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3-3-1):
   2-րդ կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին, սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի հանրապետության տոների, հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպման աշխատանքներին, ինչպես նաև աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը, այլ աշխատանքներ:
   Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
   -միջնակարգ կրթություն
   -սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթախմբում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:
   -ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

   Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016 թվականի մարտի 4-ին ժամը 12:00-ին Գետաշենի գյուղապետարանի շենքում: Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշենի գյուղապետարան և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցե՝ Աբովյան 71, հեռ. (0237)2-76-49, (0237)2-07-70, 093-72-95-22):

   Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից Գետաշենի գյուղապետարանում:

   Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2016 թվականը փետրվարի 17-ը: